№ 240 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30
1908
ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30 № 240

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲԼԻ

Ամսական ՄԷԿ րուբլի

Ամերիկա տարեկան	6 դոլլար
Եւրոպա »	30 ֆրանկ
Պարսկաստան »	10 րուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել	40 կոպ.

ԹԻՖԼԻՍԻ
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
Այսօր, հինգշաբթի, հոկտեմբերի 30-ին
կը կայանայ
Ջութակահար Դ. ԴԱՒԹԵԱՆԻ
(Բրիւսելի պրօֆ. Տօմսոնի աշակերտ)
ՀԱՄԵՐԳԸ
Մասնակցութեամբ տ. Ե. Նաւասարդեանի և պ. պ. Գլեբովի և Քարթվելովի.
Սկիզբն է երեկ. ժամը 9-ին
(առ.) 1—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է
Փորձված
ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ կամ ՈՒՍՈՒՑԻՉ
հայ ընտանիքում պարապելու մի փոքր օրիորդի և մի հասակաւորի հետ, թէ հայերէնից և թէ ռուսերէնից. Առաւելութիւն է տրվում ուսուցչուհուն.
Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը.
(ա. օ.) առ. 3—1

ՄԵՐ ԲՌՆԱԾ ԴԻՐՔԸ

Մեզ ուղարկված է «Пріазовскій Край» լրագրի մի համարը, որտեղ տպված է մի յօդուած կաթողիկոսական խնդրի մասին և ակնարկներ են արված «Մշակի» բռնած դիրքի վերաբերութեամբ.

Լրագիրը գտնում է, որ «Մշակը» գրաւել է ուժեղ դիրք հասարակական կարծիքի ասպարէզում և որ նրա ձայնը ունի հեղինակութիւն ընտրական գործի այս կամ այն ելքի և վերջնական եզրակացութեան համար, բայց միևնոյն ժամանակ նա դժգոհ է լրագրից, որովհետև յօդուածի հեղինակի տրամադրութիւնները ուղղված են դէպի բոլորովին ուրիշ կաթողիկոսական թեկնածուներ, քան ունի և պաշտպանում է «Մշակը».

Յօդուածագիրը ասում է՝

«Չենք կարող, սակայն, լռել այն անհասկանալի դերի մասին, որ ընդունել է իր վրա այս խնդրում Թիֆլիսի «Մշակ» հայ լրագիրը, որը ամենից շատ է աղմկում և աղաղակում urbis et orbi. Լրագիրը դրել է իրան մի արտօնեալ, մի ռազմական դրութեան մէջ և նրանից պէտք է բղխի վերջին վճռական խօսքը. կաթողիկոս ընտրելու արտօնութիւնը, եթէ այդպիսին գոյութիւն ունի, յանձնված է չը գիտես ումից «Մշակ» լրագրին, չը նայելով այն հանգամանքին, որ նրա անցեալում այդ գործի վերաբերութեամբ տեղի է ունեցել խոշոր սխալ».

Եթէ յօդուածագրի համար դժուար լուծելի է նրա դրած հարցը, մեզ համար նա բաւական պարզ է.

«Մշակը» իր դիրքը ստեղծել է բարոյական իր էութեամբ, հրապարակախօսական իր բովանդակութեամբ, իր անկաշառ և շիտակ խօսքով.

Ի՞նչ ենք մենք ասել կաթողիկոսական առաջին ընտրելիի մասին «Մշակի» էջերում.

Միշտ միևնոյնը այն առաջին օրից, երբ կարելի էր խօսել կաթողիկոսական թեկնածուի մասին, մինչև այսօր.

Արդարև անցեալ տարի «Մշակի» նոյեմբերի 7-ի համարում, հանգուցեալ կաթողիկոսի թաղման յաջորդ օրը, մենք «Մշակի» առաջնորդողի մէջ գրեցինք հետևեալ տողերը.

«Կաթողիկոսի թաղումից յետոյ անմիջապէս ասպարէզ է գալիս նոր կաթողիկոս ընտրելու կարևոր հարցը.

«Մշակի» մէջ տպված հեռագրից երևում է, որ Էջմիածնում ժողոված մարդիկ տալիս են Իզմիրլեանի, Խապայեանի և Օրմանեանի անունները. Մենք կարող ենք յայտնել, որ դրանցից դուրս տրվում են նաև Եղիշէ եպիսկոպոս Դուրեանի և ուրիշների անունները. Եթէ ցուցակի մէջ մտցնելու լինենք նաև վարդապետներին, կարելի կը լինէր յիշել դարձեալ թեկնածուների մի քանի անուն.

«Մինչև այժմ յիշված անուններից ամենահաւանական թեկնածուն Մատթէոս Իզմիրլեանն է».

Ուրեմն մենք Իզմիրլեանի անուանը տուել ենք բացառիկ նշանակութիւն առաջին օրից իսկ և մնացել ենք հաւատարիմ մեր ընտրութեանը մինչև վերջ.

Եւ այնուհետև կաթողիկոսական թեկնածուների մասին խօսելիս մենք միշտ ընդգծել ենք մեր առաջին ընտրելիի անունը՝ առանց տատանվելու, առանց սակարկութիւններ անելու զանազան հաշիւներով ղեկավարվողների հետ.

Եւ միթէ զարմանալի է, որ հասարակութիւնը գնահատել է մեր այդ վերաբերմունքը և ստեղծել է լրագրի համար բացառիկ մի բարոյական դիրք հասարակական կարծիքի առաջ.

Միևնոյն ժամանակ մենք չենք փակել ուրիշների բերանը յայտնելու իրանց կարծիքները կաթողիկոսական թեկնածուների մասին, որովհետև մենք համարել ենք մեզ կանգնած ամուր հողի վրա և երբէք չենք վախեցել ուրիշների արժանաւորութիւնների փաստաբանութիւնից, լաւ գիտենալով, որ համեմատութիւնները և քննադատութիւնները աւելի ևս պէտք է լուսաբանէին մեր բռնած դիրքի նշանակութիւնը, արդարացիութիւնը և բարոյական ամրութիւնը.

Անկասկած՝ մենք չէինք կարող գոհացնել թէ յօդուածագրին և թէ այն մարդկանց, որոնք առաջ են մղում Պարգևեանի և Օրմանեանի անունները, բայց մենք լաւ գիտենք, որ պաշտպանելով մի բան, մենք կունենանք և դժգոհների խմբեր մեր դիմաց.

Մենք կը յիշեցնենք և այն, ինչ որ անցեալ տարվանից մենք յայտարարեցինք «Մշակի» նոյեմբերի 9-ի համարում, թէ «մենք մասնաւոր ոչ մի դիտում չենք ունեցել երբէք ոչ մի տեղ, նոյնպէս և այժմ չունենք Էջմիածնում. Մենք ազատ ու անկախ կը լինենք մեր քննադատութիւնների ու խորհրդածութիւնների ժամանակ, կանգնած լինելով ժողովրդային-հանրային շահերի տեսակէտի վրա. Եւ մենք մեր պարտքը կը համարենք մերկացնել և հարուածել ամեն մի զանցառութիւն և զեղծում, որոնք հանդէս կը գան վտանգելու և կեղծելու ժողովրդական քուէն».

Հաւատարիմ այդ հիմնական հայեցակէտերին գործեցինք, և եթէ այսօր «Մշակի» դիրքը և ձայնը դարձել են հեղինակաւոր, մենք պարտական ենք բարոյական այն շիտակութեան և անկաշառ այն գործունէութեան, որով նա ընթացել է հրապարակախօսական ասպարէզում.

Ա. Քալանթար

ԿԱԹՈՂ. ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

Էջմիածին, 29 հոկտ., 4 ժ. 10 ր. երեկ.

Պատգամաւորների մասնաւոր խորհրդակցութիւնը կազմեց քառանուն ցանկը այսպէս՝ Իզմիրլեան, Դուրեան, Մեսրոպ արքեպ. Սմբատեան և Յովհ. եպ. Շիրակունի.

Հ. Առաքելեան

—

Երէկ, հոկտեմբերի 29-ին, ցերեկվայ գնացքով դէպի Էջմիածին ուղևորվեց «Մշակ» լրագրի խմբագիր Ա. Քալանթար. Նա ընտրված է պատգամաւոր Ռումինիայի հայ համայնքի կողմից.

—

Աղթամարի և Տիգրանակերտի կողմից կաթողիկոսական ընտրութեան պատգամաւոր է ընտրված Մեսրոպ վ. Տէր Մովսիսեանը.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բեռլին, 28 հոկտեմբերի

Ռէյխստագ. Բիւլօվը պատրաստակամութիւն յայտնեց պատասխանել հարցապնդումներին.

Նացիօնալ-լիբերալ Բասսէրման ասում է. «Կայսրի խօսակցութիւնը չափազանց զարմանք և խորագոյն վշտակցութիւն առաջ բերեց. երբ յայտնի եղաւ, որ խօսակցութիւնը տալիս է կայսրի իսկական խօսքերը,—ինչպէս արտասահմանեան, այնպէս և երկրի ներսի քննադատութիւնները անհապատ էին և ստորացուցիչ.

«Անգլիան ալեկոծվեց և կասկածեց, որ այդ խօսակցութեամբ փորձ է լինում թշնամութիւն սերմանել Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև. Ֆրանսիան, ինչպէս և Ռուսաստանը, շատ և շատ վշտացած են դէպի իրանց ցոյց տրված անհամեստութիւնը. մարոկկեան քաղաքականութիւնը այժմ դժուարին է Գերմանիայի համար. Չինաստանը, Ճապօնիան և Ամերիկան պատրաստվում են ինքնապաշտպանութեան, լսելով որ մեր նաւատորմիղը նշանակվում է Խաղաղ Ովկիանոսի համար. բուրերը և հոլլանդացիները գրգռված են. երկրի ներսում ազդեցութիւնը ամենուրեք անբարեյաջող է, ինչպէս և գերմանական դաշնակցութեան բոլոր պետութիւններում. Կայսրի միջամտութիւնը արտաքին քաղաքականութեան գործերում՝ միասիրտ ու միաբերան ընդունվեց բողոքով.

«Մեր արտասահմանեան քաղաքականութիւնը,—ինչպէս ինքը պետական կանցլերն է ասում,—պէտք է աչքի ընկնի եզականութեամբ, հաստատակամութեամբ, գործունեայ կազմով և մշտականութեամբ, նա պէտք է անաղմկալի լինի. Մենք, միապետութեան կողմնակիցներս, վերաքննութեան չենք ենթարկում մեր միապետական աշխարհահայեացքները, սակայն հանրապետականները այդօրինակ դէպքերում աջողակ նիւթ են տեսնում միապետութեան դէմ ագիտացիա մղելու համար». («Հ. Գ.»)

—

Բեռլին, 28 հոկտեմբերի

Բասսէրմանը իր ճառում ի միջի այլոց ասաց հետևեալը.

«Մենք Անգլիայի դէմ թշնամութիւն չունենք. Մենք չենք ցանկանում աշխարհիկ քաղաքականութիւն վարել Խաղաղ Ովկիանոսում. Այդ մտքով ուղղած յայտարարութիւնները չեն թեթևանում ծովային ազգային քաղաքականութեամբ. Քանի բարձր է մարդու գրաւած դիրքը, այնքան աւելի մեծ զգուշութիւն նա պէտք է երևան հանէ, այնպիսի կարծիք արտայայտելով, որ լուրջ նշանակութիւն ունենայ. Պէտք էր խուսափել պետական կանցլերին և ֆօն-Շէնին միանգամից արձակուրդ տալուց. Նկատի առնելով ներքին և արտաքին քաղաքականութեան առաջիկայի դժուարին խնդիրները, մենք չենք ցանկանում, որ Բիւլօվը հրաժարական տայ, այլ ցանկանում ենք սոսկ երաշխաւորութիւն ունենալ, որ կայսրը այլ ևս չի միջամտի կառավարութեան գործերին».

Սօցիալ-դեմօկրատների հարցապնդումը պաշտպանում էր Զինգերը. Նա, ի միջի այլոց, ասում է. «Արտասահմանում «Daily Telegr.»-ի մերկացումները ընդունվեցին ծաղրով և հեգնանքներով. Ռէյխստագի մեծամասնութեան վրա է ընկնում դրա համար յանցանքի մի մասը» (մեծամասնութիւնը բողոքում է). Ճառախօսը շարունակում է ասել, որ Գերմանիայի ընդարձակ խաւերը թշնամաբար են տրամադրված դէպի Անգլիան, նշաւակում է վիճել ակներևութեան դէմ. «Կայսրը, կարծես թէ, ճախրում է ամպերում. Ռէյխստագը պէտք է մտցնի ուրիշ կարգեր կանցլերի և կայսրի ցանկութեան հակառակ, որպէս զի մենք դուրս գայինք թեթևամտութեան, ճառերի, հեռագիրների ու նամակների քաղաքականութիւնից. Բասսերմանի պահանջը կայսերական կանցլերի պատուէրով կատարված մի աշխատանք է. Գերմանական ժողովուրդը պէտք է պաշտպանված լինի այդ տեսակ դէպքերի կրկնութիւնից օրէնքով և սահմանադրութեան համապատասխան փոփոխութեամբ, որպէս զի նրանով պատերազմի և խաղաղութեան հարցերի լուծումը վերապահված լինէր ժողովրդին, և մէկ էլ մինիստրների պատասխանատուութեան օրէնքով». («Հ. Գ.»)

—

Բեռլին, 28 հոկտեմբերի

Ռէյխստագի բոլոր ամբիոնների տեղերը պատրաստ են արդէն մի քանի օր առաջ. Ռէյխստագի առաջ խռնված է մեծ բազմութիւն. Պատգամաւորները համարեա բոլորը եկել են. Կառավարական աթոռներում են բոլոր մինիստրները՝ գլուխ ունենալով Բիւլօվին. Դաշնակցական խորհուրդը եկել է համարեա ամբողջ կազմով. Դիպլօմատիական օթեակները լի են.

Բասսէրմանը աւարտում է իր ճառը.

«Մեզ հարկաւոր են այնպիսի մարդիկ, որոնք չեն ծռում իրանց թիկունքները և որոնք կարողանում են իրանց ազատ կարծիքը յայտնել.

«Ռէյխստագը պէտք է աւելի մեծ ազդեցութիւն ձեռք բերէ արտաքին քաղաքականութեան վրա. Մենք ոչ մի հետևանք չենք սպասում բիւրոկրատական կուսակցութիւնների միացեալ ուղերձից և ցանկանում ենք, որպէս զի կայսրը հիմնաւորապէս տեղեկանայ այսօրվայ նիւթի մասին.

«Մենք չենք կամենում, որպէս զի կայսրի և ազգի միջև վէճ առաջանայ. ցանկանում ենք, որպէս զի պետութեան ղեկավարութիւնը գտնվի տեղեակ պաշտօնական անձանց ձեռքերում».

Հռետորը այնուհետև կարդաց ազգային-լիբերալ կուսակցութեան կենտրօնական կօմիտէի յայտարարութիւնը, որով ցոյց է տրվում, որ կայսրի անձնական միջամտութիւնը արտաքին քաղաքականութեան մէջ բնաւ պետութիւնը դէպի բարգաւաճում չէ առաջնորդում և չէ համապատասխանում սահմանադրութեանը. Ընդունելով կայսրի բարեացակամ շարժառիթները, յայտարարութիւնը ցանկութիւն է յայտնում, որպէս զի կայսրը ունենայ այն զսպողականութիւնը, որ վայել է սահմանադրական միապետին. («Հ. Գ.»)

—

Բեռլին, 28 հոկտեմբերի

Ստատս-սեկրետարի պաշտօնակատար Կիդերլէն-Վեխտերը և Կամբօնը արտաքին գործերի մինիստրութեան մէջ ստորագրեցին հետևեալ համաձայնութիւնը.

«Գերմանական և ֆրանսիական կառավարութիւնները ցաւակցութիւն են յայտնում Կազաբլանկում սեպտեմբերի 12-ին պատահած դէպքերի առիթով, որոնք ստիպեցին ենթակայ մարմիններին ամօթալի բռնի գործողութիւնների դիմել. Երկու կառավարութիւնները որոշում են յարուցված հարցերի միաւորութիւնը յանձնել միջնորդ դատարանի. Կառավարութիւններից իւրաքանչիւրը փոխադարձ համաձայնութեամբ պարտաւորվում է ցաւ յայտնել այդ մարմինների գործողութիւնների համար համաձայն այն դատավճռի, որպիսին կը կայացնէ միջնորդ դատարանը ինչպէս կատարված դէպքի, այնպէս և իրաւունքի խնդիրների վերաբերութեամբ».

(«Հ. Գ.»)

—

Բեռլին, 28 հոկտեմբերի

«Norddeutche Al. Zeit.»-ի բացատրութիւնը Կազաբլանկի միջադէպի մասին այստեղ բացատրում են իբրև նահանջում Գերմանիայի կողմից.

Պահպանողական և համագերմանական լրագիրները դժգոհութիւն են յայտնում.

Առանձնապէս խիստ է խօսում համագերմանական «Tegl. R.» օրաթերթը. Լրագիրը ասում է, որ Կազաբլանկի միջադէպով նոր հարուած հասցվեց գերմանական արտաքին քաղաքականութեան. այժմ հարկաւոր է օրինաւոր ճանապարհով ինքնապաշտպանութեան դիմել Գերմանիայի արտաքին քաղաքականութեան ղեկավարիչների անընդունակութեան դէմ.

Ազատամիտ օրաթերթերը հաւանութիւն են տալիս գերմանական կառավարութեան վճիռներին. («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 28 հոկտեմբերի

Երէկ երեկոյեան աւստրիացի նաւաստիները բուլղար նաւաստիների հետ միասին, հոլլանդական սրճարանում քէֆ անելուց յետոյ, պոկեցին և այրեցին թիւրքական դրօշակը. Այս միջադէպը առիթ է տուել զանազան մեկնաբանութիւնների.

Բ. Դուռը մի նօտայով աւստրիական դեսպանից պահանջում է ներողութիւն խնդրել. («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 28 հոկտեմբերի

Մեծ վէզիրին և արտաքին գործերի մինիստրին այցելած ռուսաց դեսպանին հաղորդվեց, որ Թիւրքիան, որ հանապազ խաղաղ է տրամադրված, ցոյց է տալիս իր ձգտումը դէպի խաղաղութիւն, արձակելով հոկտեմբերի 28-ից գինուորական վարժութիւնների համար ժողոված երրորդ և չորրորդ զօրաբանակների հինգ դիվիզիաներին և պահեստի զինուորներին. Նաև ի նշան խաղաղ տրամադրութեան, Թիւրքիան դադարեցրեց մնացած դիվիզիաների պահեստի զինուորների ժողովելը.

(«Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 27 հոկտեմբերի

Կալանաւորված է ռէակցիօն կօմիտէի նախագահ Ահմեդ բէյը. Նրա մօտ խուզարկութիւն կատարելիս գտել են թղթեր, որից երևում է, որ նա գրագրութիւն է ունեցել Եըլդըզ-Քէօշկի հետ. Ռէակցիօնէրների կօմիտէն գտնվում է Սկիւտարում և իր տրամադրութեան տակ ունի, ինչպէս հաստատում են, տասն և հինգ հազար զինված մարդիկ, որոնք պատրաստ են սուլթանի հրամանի համաձայն ոչնչացնել սահմանադրութիւնը. Երիտասարդ-թիւրքերի միջև անհամաձայնութիւն է տիրում, ոմանք պահանջում են անմիջապէս գահընկէց անել սուլթանին, իսկ ուրիշները առաջարկում են սպասել բարեյաջող րօպէին.

Աւստրիական շոգենաւային ընկերութիւնները առաջարկել են Բարձրագոյն Դրանը իրանց ծառայութիւնը հարկաւոր դէպքում զօրքերը ծովի կերպով տեղափոխելու համար. Բարձրագոյն Դուռը քաղաքավարի ձևով հրաժարվել է ընդունել այդ առաջարկը.

(«Кс.»)

—

Վիէննա, 28 հոկտեմբերի

«Cor. Bur.»-ի տեղեկութիւնների համաձայն, Ֆրանց-Յովսէփը ընդունեց Բօսնիայի և Հերցեգովինայի մահմեդականների պատգամաւորութեան և Սարաէվի քաղաքապետութեան խորհրդին.

Սարաէվի քաղաքապետը մահմեդական պատգամաւորութեան անունից դիմեց կայսրին մի ճառով, որով ի միջի այլոց ցանկութիւն յայտնեց, որպէսզի դրական օրէնքներով աւելի եւ ամրապնդվի մահմեդականների սեփականութեան իրաւունքը և մահմեդականների դաւանութիւնը ազատութիւն վայելէ։

Կայսրը շնորհակալութիւն յայտնեց և շեշտեց մահմեդականների իրաւունքների ընդլայնման վրա։

Այնուհետեւ պատգամաւորների պատւին ճաշկերոյթ տրվեց քաղաքային վարչութեան մէջ։

Ի նշան գերմանացիների և մահմեդականների եղբայրութեան և բարեկամութեան մի մզկիթ կը կառուցվի Վիէննայում։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 28 հոկտեմբերի

Բօսնիայի մահմեդական պատգամաւորութեան հանդիսաւոր ընդունելութիւնը զուտ պաշտօնական է. ազգաբնակութիւնը սրտագին մասնակցութիւն է ցոյց տալիս։

Պատգամաւորութեան անդամները խուսափում են պատասխանել քաղաքական ճառերին, հետաքրքրութիւն ցոյց տալով սոսկ դէպի տնտեսական հարցերը։

Բօսնիայի մահմեդականները ստորագրութիւններ են ժողովում այն գրութեան համար, որով բողոքվում է, թէ պատգամաւորութիւնը ինքնակոչ պատգամաւորութիւն է։ Բողոքագիրը կուղարկվի Վիէննա Հռոմի վրայով, խառորնակի ճանապարհով։

Կաթօլիկութեան յայտնի մարտնչող բօսնիացի Շտադլէրը Սարաեվօում կազմակերպում է կաթօլիկ խօրվատների ամենահպատակ պատգամաւորութիւն։

Մօստարում դադարեց սերբիական օպպօզիցիօն լրագիրը։

Սարաեվօում վերստին լոյս տեսաւ դադարած «Сербская Рѣчь» օրգանը։ («Հ. Գ.»)

—

Բուդապեշտ, 28 հոկտեմբերի

Չը նայած ձեռք առնված ոստիկանական միջոցներին, սօցիալ-դեմօկրատները կազմեցին ցոյցի կերպարանքով զբօսանքներ և գնացքներ ընտրողական իրաւունքի օրինագծի դէմ բողոքելու նպատակով։ Ցուցարարներին ցրելու համար ոստիկանութիւնը ստիպված զէնքի դիմեց։ Մի քանի մարդ վիրաւորված են. 24 հոգի ձերբակալվեցին։ («Հ. Գ.»)

—

Բէլգրադ, 26 հոկտեմբերի

Բօսնիայում և Հերցեգովինայում արդէն ապստամբութիւնը սկսվել է։ Աւստրիական իշխանութիւնները զգուշութեամբ թագցնում են կատարվող անցքերը։ («Kc.»)

—

Վիէննա, 28 հոկտեմբերի

«Cor. Bureau»-ն հաղորդում է, որ զինուորական տեղեկ շրջանները վճռականապէս հերքում են վերջին օրերս մամուլում, առանձնապէս արտասահմանեան, երևացած այն յուզալից տեղեկութիւնները, որոնք ուղարկվում են Սերբիայից և Հերցեգովինայից սերբիական և չերնօգօրիական սահմանների վրա հրոսակախմբերի յարձակումների, աւստրօ-ունգարական զօրքի օֆիցերների և զինուորների փախուստի, հետևակ զինուորների սերբիական զինուորների ձեռքով մահացութիւնների մասին և այլն։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 28 հոկտեմբերի

Զագրէբի պետական դաւաճանութեան համար դատապարտված սերբերի պաշտպանները դիմեցին Եւրոպայի հասարակական կարծիքին մի բողոքով բոլոր լեզուներով։

Ստացված տեղեկութիւնների համաձայն, Ռումինիայի շատ քաղաքներում տեղի են ունենում նացիօնալիստների ժողովները Աւստրօ-Ունգարիայի դէմ։ Կրայօվում զօրքերը քշել են ամբոխը աւստրիական հիւպատոսարանի մօտից («Հ. Գ.»)

—

Լօնդօն, 28 հոկտեմբերի

Համայնքների պալատում Բուղերֆօրը հարց տուեց Գրէյին՝ անգլօ-ռուսական համաձայնութեան շահերի տեսակէտից ցանկալի չէ՞ գտնում նա, արդեօք, հարց յարուցել այն մասին, որպէսզի համապատասխան կառավարութիւնները յետ կանչէին պարսից ծառայութեան մէջ գտնվող իրանց հպատակներին։

Գրէյը պատասխանեց բացասական մտքով և յայտնեց, որ այդ հարցի յարուցումը նա ցանկալի չէ գտնում։ («Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 28 հոկտեմբերի

Երեկոյեան երեք կովկասցի յեղափոխականներ, հարբած, ներս խուժեցին ռուսաց հիւպատոսարանի վարձու թարգմանի տունը և սպառնացին նրան սպանել։ Թարգմանը թաքնվեց հիւպատոսարանի մէջ։ («Հ. Գ.»)

—

Ուրմիա, 27 հոկտեմբ. (Ջուլֆայի վրայով)

Նահանգապետի հրաւէրից ազգաբնակութեան բոլոր խաւերի ներկայացուցիչներին և նախկին անջումանի անդամներին ժողովի, ուր, դիմելով նրանց խելացիութեան, խնդրեց աջակցել յեղափոխական գործողութիւնների դադարեցման և յայտնեց, որ անկարգութիւնների վերսկսման դէպքում նա կը մեկնէ քաղաքից և վերջինիս կը թողնէ բաղդի կամքին։

Նահանգապետի յորդորանքները ըստ երևոյթին ազդեցութիւն թողին։ («Հ. Գ.»)

—

Բագու, 27 հոկտեմբերի

Ցերեկով, չարագործներին ձերբակալելու ժամանակ, տեղի ունեցաւ հրացանաձգութիւն, որ տևեց մի քանի ժամ։ Սպանվեց մի քաղաքապահ ոստիկան, վիրաւորվեց միւսը, սպանվեց չարագործներից մինը։ Մի քանի մարդ ձերբակալվեցին։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 27 հոկտեմբերի

Լուր է պտտում, որ Մակարօվը նշանակվում է ներքին գործերի մինիստր։

Սօց.-դեմօկրատական ֆրակցիայի պատգամաւորները Դումայում առաջարկ են անելու Կօսօրօտօվի կալանաւորութեան մասին։ Ֆրակցիան շնորհաւորական հեռագիր է ուղարկել երկրորդ Դումայի դատապարտված պատգամաւորներին։

Պետերբուրգի քաղաքապանները մի նամակ են ուղարկել Դումայի պատգամաւորներից մէկին, բողոքելով եղբայր Կօվալենկիների գործողութիւնների դէմ։ («Kc.»)

—

Թաւրիզ, 27 հոկտեմբերի

Անջումանները դիմեցին անգլիական, գերմանական և ֆրանսիական դեսպաններին, հարցնելով թէ իրա՞ւ է, արդեօք, որ շահը Ռուսաստանից օգնութիւն է խնդրել։ («Kc.»)

—

Նօվօչերկասկ, 28 հոկտեմբերի

Տագանրօգի գաւառում 10 զինված չարագործներ, յարձակվելով կալուածատիրուհի Կօբէտլիէվայի վրա իր գաստակերտը վերադառնալու ժամանակ, յափշտակել են նրանից 13,300 րուբլի դրամ և 400 րուբլու իրեր։ («Հ. Գ.)

—

Րէվէլ, 28 հոկտեմբերի

Զինուորական-նահանգական դատարանը տասնմէկ օր քննելուց յետոյ Սօլիսբուրգի հանրապետութեան գործը՝ մեղադրեալներից ութ հոգուն դատապարտեց կախաղանի, 17-ին՝ բանտարկութեան զանազան ժամանակով, 10-ին արդարացրեց։ («Հ. Գ.»)

—

Քութայիս, 28 հոկտեմբերի

Առաւօտեան ժամը 11-ին անյայտ չարագործներ փողոցում յարձակվեցին բէլգիական դպրոցի վերակացուի վրա և, վիրաւորելով նրան թեթև՝ գլխից, խլեցին նրանից 900 րուբլի և անյայտացան։ («Հ. Գ.»)

—

Քերմինէ, 28 հոկտեմբերի

Բուխարայի էմիրը վերադարձաւ իր պաշտօնատեղին։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 27 հոկտեմբերի

Իշխան Գագֆելդից յետոյ սկսեց իր ճառը կանցլէր Բիւլօվը, Դահլիճում տիրած խորին լռութեան մէջ Բիւլօվը խօսեց պարզ և հանգիստ՝ քսան րոպէ։ Նրա ճառը վերջանալիս հաւանութեան բացագանչութիւնները լսվում էին միայն աջակողմեանների սեղաններից։ Բիւլօվը ասաց. «Ես չեմ խօսի նախորդ ճառախօսների շօշափած բոլոր կէտերի մասին։ Ես պէտք է ուշադրութեան առնեմ այն տպաւորութիւնը, որ կարող են թողնել իմ խօսքերը արտասահմանում և չեմ ուզում աւելի ևս կրկնապատկել այն ֆիասը, որ պատճառեց «Daily Telegr.»-ում լոյս տեսած յօդուածը (ձայներ՝ լսեցէք, լսեցէք)։ Զանազան ժամանակներում նորին մեծութիւնը իր մասնաւոր կարծիքներն է յայտնել անգլիացի մասնաւոր անձանց։ Նրա այդ ասածներից կազմված է մի յօդուած և հրատարակված «Daily Telegr.» թերթում։ Ես պէտք է կարծեմ, որ ոչ բոլոր մանրամասնութիւններն են ճիշտ կերպով հաղորդված. (ձայներ աջակողմից. լսեցէք, լսեցէք)։ Մի փաստի մասին ինձ յայտնի է, որ ուղիղ չէ յայտնված. այդ պատերազմի նախագծի պատմութիւնն է (աջակողմից. լսեցէք, լսեցէք)։ Խնդիրը վերաբերում էր ոչ թէ պատերազմի մանրամասն նախագիծը մշակելուն, այլ արտայայտված զուտ ակադեմիական մտքերին» (ծիծաղ ձախակողմեան նստարանների վրա)։

Կանցլէրը շարունակում է. «Խնդրում եմ հանգստութեամբ լսել ինձ։ Կարծում եմ, որ կայսրի արտայայտած մտքերը ուղղակի անուանված են աֆօրիզմներ՝ պատերազմելու մասին առհասարակ։ Այդ աֆօրիզմները կայսրը գրել է հանգուցեալ Վիկտօրիա թագուհու հետ ունեցած գրագրութիւնների ժամանակ։ Նրանք տեօրետիկ խորհրդակցութիւններ էին միայն և զուրկ գործնական որևէ նշանակութիւնից՝ պատերազմի թէ ընթացքի և թէ հետևանքի վերաբերմամբ։ Գեներալների շտաբի կառավարիչ գեներալ Մօլտկէն և նրա նախորդ կոմս Շլիֆենը յայտնեցին, որ գեներալների շտաբը զեկուցել է կայսրին բուրերի, ինչպէս և առհասարակ ուրիշ մեծ ու փոքր պատերազմների մասին, որոնք տեղի են ունեցել բոլոր երկիրներում վերջին տասնեակ տարիների ընթացքում, բայց նրանք երկուսն էլ հաւատացնում են, որ գեներալների շտաբը երբեք քննութեան չէ ենթարկել պատերազմի նախագիծը կամ մի որևէ ուրիշ աշխատութիւնը կայսրի, որը վերաբերում լինէր բուրերի պատերազմին, նմանապէս նա մի այդպիսի աշխատութիւն չէ էլ տուել Անգլիային (աջակողմում և ձախակողմում. լսեցէք, լսեցէք)։ Միևնոյն ժամանակ ես պէտք է պաշտպանեմ մեր քաղաքականութիւնը նրա դէմ ուղղված այն կշտամբանքներից, որ նա իբր երկդիմի դիրք էր բռնել դէպի բուրերը։ Ինչպէս այդ կարելի է հաստատել փաստաթղթերով, մենք իր ժամանակին նախազգուշացրել էինք Տրանսվաալի կառավարութեանը և նկատեցինք նրան, որ Անգլիայի դէմ պատերազմելու դէպքում նա կը մնայ միայնակ։ 1899 թւին, մայիսին, մենք անմիջական կերպով, նմանապէս և մեր բարեկամ հօլլանդական կառավարութեան դեսպանութեան միջոցով, խորհուրդ տուինք Տրանսվաալին խաղաղ համաձայնութեան գալ Անգլիայի հետ, որովհետև կասկածից դուրս էր զինված ընդհարման հետևանքը։ Անգլօ-բուրական պատերազմին միջամտելու հարցի մասին գոյները չափազանց խտացված են «Daily Telegr.» լրագրում։ Այդ փաստը վաղուց արդէն յայտնի էր (ձայներ. լսեցէք, լսեցէք). մերկացումների մասին խօսք լինել չէ կարող։ Այստեղ այն կարծիքը յայտնեցին, որ երբ կայսրի ասած այն խօսքերը, թէ Գերմանիան չը համաձայնվեց հետևել՝ պատերազմի համար միջնորդ հանդիսանալու կամ միջամտելու առաջարկին, որը կը լինէր խախտումն դիպլօմատիական յարաբերութիւնների միջազգային կանօններին։ Գուցէ ամենից աւելի ֆատալ քաղաքականութիւնը կը լինէր այն, որ չէին վախենում անհամեստութիւնից։ Որպէսզի կարողանանք ասել, կա՞յ, արդեօք, այդ բոլորի մէջ վստահութեան խախտումն թէ ոչ, հարկաւոր է գործի մերձաւոր հանգամանքների մասին աւելի շատ բան իմանալ, քան թէ այն, որ արդէն ասված է «Daily Telegr.»-ի մէջ։ Մենք կարող էինք իրաւունք համարել մեզ այդպիսի տեղեկութիւններ տալու, եթէ որևիցէ կողմից փորձ կատարվէր աղաւաղելու մեր մաքուր շարժառիթները կամ թէ կասկածներ զարթեցնելու մեր գործողութիւնների եղանակի դէմ։

«Ես արդէն ասացի, որ վերոյիշեալ թերթի մէջ տպված յօդուածի մի քանի տեղերը չափազանց արդէն ուժեղ են։ Դա նախ և առաջ վերաբերում է այն տեղին, ուր կայսրին վերագրվում են այն խօսքերը՝ թէ գերմանական ժողովրդի մեծամասնութիւնը թշնամաբար է տրամադրված Անգլիայի դէմ։ Գերմանիայի և Անգլիայի միջև արդարև ծագել են լուրջ և ցաւալի բնաւորութիւն ունեցող թիւրիմացութիւններ, բայց կարծում եմ, որ գերմանական ժողովուրդը բարեկամական յարաբերութիւններ է ուզում ունենալ Անգլիայի հետ փոխադարձ յարգանքի վրա հիմնված։ Գիտեմ, որ իմ հայեացքը ընդունվում է ամբողջ բարձր ժողովի կողմից (բացագանչութիւններ՝ բրաւօ)։ Վկայում եմ, որ բոլոր կուսակցութիւնների ճառախօսները խօսեցին միահամուռ ոգով և այն էլ սաստիկ խտացրած գոյներով այն մասում, որը վերաբերում էր Խաղաղ Ովկիանոսում ունեցած մեր շահերին. Նա սխալ կերպով լուսաբանվեց՝ Ճապօնիայի համար թշնամական իմաստով։ Հեռաւոր-Արևելքում մենք երբեք չենք ունեցել ուրիշ ծրագիրներ, բացի նրանից, որ Հեռաւոր-Արևելքի առևտրական շուկայում աշխատել ենք Գերմանիայի համար ձեռք բերել մասնակցութեան իրաւունք և գործելու ապահովութիւն։ Գերմանական նաւաշինութեան գործը հեռու է Խաղաղ Ովկիանոսում, ինչպէս և Եւրոպայում, ագրեսիվ, նուաճողական միտումներ ունենալուց»։ («Հ. Գ.»)

(Կը շարունակվի)

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

—

Էջմիածին հաւաքված պատգամաւորների թւում, հարիւր հազար ազգաբնակութիւն ունեցող Կիլիկիայի թեմը չունի իր ներկայացուցիչը։ Պաշտօնական կերպով նա մերժել է մասնակցել ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեանը։

Այդ է փաստը։

Սակայն ինչ հիմնաւոր շարժառիթներով։

Սսի Սահակ կաթողիկոսը՝ իր հրաժարվելը մասնակցութիւնից՝ պատճառաբանում է նախ նրանով, որ Կիլիկիայի թեմը ունի 7 վիճակներ, մինչդեռ յատկացված է մի վիճակի իրաւունք և ուղարկված մի հրաւիրաթուղթ, իսկ երկրորդ՝ որ այդ հրաւիրաթուղթը փոխանակ անմիջապէս իրան կաթողիկոսին ուղարկելու, ազգային պատրիարքարանի միջոցով է յանձնված։

Ուրիշ խօսքով Սսի կաթողիկոսը իրաւունքների և դիւանագիտական նրբութիւնների կամ արժանապատւութեան խնդիրներ է յուզում։

Չը պէտք է մոռանալ, որ այդ պատճառաբանութիւնները, որքան էլ լինեն մասնաւորապէս արդարացի, այնուամենայնիւ, ժամանակի ակներև անպատեհութիւնը ի նկատի առնելով, թողնում են բծախնդրութեան տպաւորութիւն։

Որովհետև ո՞րն է այն իրական մարմինը, որ Մայր-Աթոռի ներկայ թափուր մօմենտում հնարաւորութիւն ունենար լուծումն տալու այդ տեսակ խնդիրներին։

Վերցնենք հէնց ձայների անհաւասար բաշխման խնդիրը։

Ո՞վ չը գիտէ, որ նա կատարված է անհաւասար և այսօր ամենևին չէ համապատասխանում մեր իրականութեանը։

Ինչո՞ւ Եւրոպայի և Ամերիկայի հայ թեմերը զրկված պիտի լինեն ձայների իրաւունքից։

Ինչո՞ւ մի քանի հարիւր հազար ազգաբնակութիւն ունեցող թեմն էլ մի պատգամաւոր տայ, մի քանի հազար ունեցողն էլ և այլն։

Այդ ամենի դէմ բողոքելու աւելի ևս հիմնաւոր պատճառներ ունենք մենք ռուսահայերս, քան թէ Թիւրքիայի հայերը։

Եւ անշուշտ, ժամանակ է, վերջապէս, վերացնել ընտրողական այդ անարդարութիւններն ու անկանոնութիւնները։

Ընտրողական սիստեմի բարեփոխութիւնը, ձայների արդարացի բաշխման խնդիրը հրապարակի վրա են դրված։

Նրանց լուծումը, որքան էլ կախված է ժողովրդից, իրողութիւնն այն է, որ նկատողութեան առնված բարեփոխութիւններին ընթացք տալը օրինական կարգով վերապահված է ամենայն հայոց կաթողիկոսի իրաւասութեանը։

Եւ այսօր, երբ չը կայ այդ կաթողիկոսը, չափազանց տարօրինակ է Կիլիկիայի կաթողիկոսի վերաբերմունքը։

Նա եթէ անհրաժեշտ է գտնում այդ բարեփոխութիւնը և ներկայ դէպքում, իբրօք, ղեկավարվել է վերոյիշեալ առաջին պատճառով. նա պէտք է նպաստէր կաթողիկոսի շուտափոյթ ընտրութեանը, այլ ոչ թէ խոչընդոտ լինելու փորձեր անէր։

*

Կիլիկիայի կաթողիկոսութեան ներկայացուցիչների բացակայութիւնը այդ տեսակ պատճառաբանութիւններով չէ կարող սակայն խոչընդոտ լինել ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեանը։ Եթէ չասենք, որ այդ քայլը թելադրված է հակաթոռային վաղեմի անհաշտութիւնները վերանորոգելու ձգտումով, պարզօրէն հասկանալի պիտի համարենք, որ այդ յարուցված խնդիրները Ազգային Պատրիարքարանին և Կիլիկիայի կաթողիկոսութեանը վերաբերող ներքին խնդիրներ են, որոնց միջամտելու համար Էջմիածնի սինօդը ոչ մի իրաւասութիւն չունի։

Ինչպէս յայտնի է, կաթողիկոսական ընտրութիւններին մասնակցող հայ վիճակների ընդհանուր թիւը հաստատված է սինօդի և ռուսաց կառավարութեան կողմից 1843 թւին։ Թիւրքիայի 45 վիճակների ցուցակը ներկայացրել է Պօլսի պատրիարքարանը, և մի-մի վիճակ էլ Պօլօժենիայի հիման վրա համարվել են Կիլիկիայի, Աղթամարի և Երուսաղէմի աթոռները, ուրեմն ընդամենը 48 վիճակներ։

Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութիւնները մինչև այսօր էլ կատարվել են այդ հիմունքներով և մասնակցել են 56 վիճակներ։ Ներկայումս մէկը այդ վիճակներից (Կարսինը) պակասել է, իսկ միւսները մնում են անփոփոխ։

Անփոփոխ է մնացել դրութիւնը, ի միջի այլոց, և Կիլիկիայի համար։

Եթէ հնարաւորութիւն կար այս ամբողջ մի տարվայ ընթացքում, առանց կաթողիկոսի, ձայների հաւասարութիւն մտցնել Թիւրքիայի վիճակները փոփոխութեան ենթարկելով, արդարութիւնը պահանջում է, որ կատարված լինէր։

Բայց Սսի կաթողիկոսը ինչո՞ւ այժմ է միայն զարթեցնում խնդիրը։

Արդ՝ եթէ անհնարին է, ուրեմն պէտք էր սպասել, պէտք չէր հրաժարվել. Թւում է մեզ, որ մեծ սխալ էր Կիլիկիայի կաթողիկոսի կողմից իրաւունքների հարց զարթեցնել բօյկօտի եղանակով, որը անկասկածօրէն մղում է դէպի անհաշտութեան և բծախնդրութեան ուղին։

Էջմիածին հաւաքված պատգամաւորներից իւրաքանչիւրին յայտնի պէտք է լինի, որ ներկայ ընտրութիւնները կատարված են եղել հին, պակասաւոր հիմունքներով, որից, ի միջի այլոց, զերծ չէր կարող մնալ Կիլիկիան ևս։ Ուստի այն խնդիրները, որոնք հանդէս են բերված Սսի կաթողիկոսի պատճառաբանութիւնների մէջ, չը պէտք է կասեցնեն նրան իր սահմանած պարտականութիւններից։

Պատգամաւորական համագումարը թող շօշափէ Կիլիկիայի խնդիրը իբրև մի մասնիկը ընդհանրութեան և ըստ այնմ էլ արտայայտէ իր վերաբերմունքը։

Վերջին օրինական խօսքը պատկանում է ամենայն հայոց կաթողիկոսին, որի ընտրութիւնը պէտք է փութացնել։

Լ. Դանիէլեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ

—

Ամիսներ առաջ այս հարցը դրվեց մամուլի մէջ և գրական պատասխան ընդունեց «Մշակի» կողմից։ Ընտրութիւնների նախօրեակումն ենք այժմ, և կարծես մոռացված է այն, ոչ ոքի չէ զբաղեցնում։ Չեն հաւատում, թէ լուրջ հետևանքի հասնել հնարաւոր է՝ այդ հարցը նորից զարթեցնելով։ Միւս կողմից ոչ թեմական ժողովներում, ոչ մասնաւոր խորհրդակցութիւնների մէջ, ոչ մամուլի էջերում՝ դեռ ոչ մի տեղ չորս եպիսկոպոսների անուններ որոշ կերպով իրար կողքի չեն դրված, որ նրանցից հայրապետական թեկնածուների քառանուն ցանկը կազմվէր, և հազիւ թէ Էջմիածին ուղևորվող պատգամաւորներից մէկի համար պարզ լինի և հաստատուն այդ ցանկը։ Իսկ այս անգամվայ ընտրութիւնը անցեալների նման չէ, երբ կարելի էր լինում նախօրօք համաձայնութեան գալ, իբրև երրորդ և չորրորդ թեկնածուներ դնել այնպիսիներին, որոնք միայն ձևի համար էին և գրեթէ բոլորից սև քուէ պիտի ստանային։ Վերջին օրերս տեղի ունեցած կարգադրութեան համաձայն, գաղտնի քուէարկութիւն պիտի լինի, և այդ դէպքում թեկնածուներից իւրաքանչիւրը կարող է զանազան բաղդութիւնների շնորհիւ առաւելագոյն քուէ ստանալ։ Պէտք է ուրեմն մեծ խնամքով կատարել սկզբից և եթ ոչ միայն առաջին և երկրորդ, այլ նաև բոլոր թեկնածուների ընտրութիւնը. պէտք է գոնէ այն պատգամաւորները, որոնք կուսակցական կամ անձնական շահերով չեն առաջնորդվում և պատասխանատուութեան զոհ լինել չեն կամենում, աչքի առաջ ունենան առնուազն չորս այնպիսի արժանաւորագոյն եկեղեցականներ, որ ձախող դէպքում նրանց մէջ ամենից պակաս արժանաւորի ընտրութիւնն իսկ աղէտաբեր չը լինի եկեղեցու համար։ Արդ, ովքե՞ր են այդ չորսը, և եթէ մինչև այժմ չորս այդպիսի անուն տալ փորձողները ստիպված են եղել ի վերջոյ գոնէ մի վարդապետ մէջ բերել՝ հէնց այդ պարագան միթէ բաւական չէ ցոյց տալու, որ վարդապետների թեկնածութեան խնդիրը շատ լուրջ ուշադրութեան պէտք է առնվի։ Եւ զարմանալի՞ է, որ այդ խնդիրը կամայ-ակամայ առաջ է գալիս։ Վերջին երկու տարվայ մէջ մի քանի առաջնորդական ընտրութիւններ եղան և ամեն անգամ գրեթէ ոչ մի եպիսկոպոսի անուն չէր յիշվում. իբրև թեկնածուներ առաջարկվեցին և ընտրվեցին՝ բացառապէս վարդապետներ։ Կը նշանակէ ուրեմն, որ երբ ժողովրդի ներկայացուցիչներն առիթ են ունեցել իրանք իրանց համար հովիւ որոշելու՝ եղած վարդապետներին աւելի արժանաւոր են համարել եպիսկոպոսական պաշտօնի համար, քան եղած եպիսկոպոսներին. բայց մի տարօրինակ թիւրիմացութեամբ նոյն վարդապետները համարվել են անարժան եպիսկոպոսական կոչման և մնացել են վարդապետ. միթէ այդ արգելք պէտք է լինի նրանց անունը դնելու նրանցից պակաս արժանիքի տէր նկատված եպիսկոպոսների շարքում իբրև թեկնածու բարձրագոյն, եպիսկոպոսապետական իշխանութեան։ Կա՞յ արդեօք այդպիսի արգելք հայոց եկեղեցու կանօնական տեսակէտից. կա՞յ արդեօք այն կանօնադրութեան տեսակէտից, որով կառավարվում է այժմ մեր եկեղեցին Ռուսաստանի սահմաններում։ Հաստատապէս կը պատասխանենք—ոչ։

Վերցնենք ամենից առաջ հայոց եկեղեցու անցեալը։ Մինչև Է. դարի սկիզբը մեզ յայտնի չէ հայոց եկեղեցու հայրապետներից ոչ մէկը, որ եպիսկոպոսութիւնից հայրապետական աթոռ բարձրացած լինի. ոմանց համար՝ ինչպէս և Լուսաւորիչ, Մեծն Ներսէս գիտենք, որ աշխարհական վիճակից անմիջապէս ընտրվել են կաթողիկոս, ուրիշները եղել են «երէց», «վարդապետ»։ Այդ համապատասխան էր բոլորովին նախնական եկեղեցու ըմբռնման, երբ եպիսկոպոսները ընտրվում էին ցմահ և կապված մնում իրանց աթոռի հետ. ընդհանրական հայրապետն էլ Այրարատի եպիսկոպոս էր՝ եպիսկոպոսապետական իրաւունքներով։ Յաջորդ դարերում թէ եպիսկոպոսների և թէ մանաւանդ հայրապետի դիրքը փոխվեց. ժառանգական իրաւունքներով այս կամ այն աթոռը բարձրանալու սովորութիւնը բոլորովին մոռացվեց, կաթողիկոսական բարձր իշխանութիւնը ամենից աւելի դիրք ունեցող եպիսկոպոսների ձգտման առարկան դարձաւ. և սակայն շատ յաճախ հայրապետներին ընտրված տեսնում ենք դարձեալ վարդապետների շարքից. պատահում են նոյնիսկ բացառիկ դէպքեր, երբ եկեղեցին ծանր դրութիւնից հանելու համար մի աչքի ընկնող աշխարհականի են հրաւիրում Լուսաւորչի աթոռի վրա բազմելու, ինչպէս Զաքարիա Ձագեցուն Թ. դարում, Վահրամ-Գրիգոր Բ. Պահլաւունուն ԺԲ. դարում։ 1441 թւին, երբ հայրապետական աթոռը Կիլիկիայից Էջմիածին փոխադրվեց, մեր եկեղեցու և ազգի նորագոյն պատմութեան համար անչափ մեծ նշանակութիւն ունեցող այդ փաստը ձեռնարկութեան հեղինակները վարդապետներ էին և կաթողիկոս ընտրելով մի վարդապետ Խոր-վիրապի վանահայր Կիրակոս Վիրպեցուն՝ նրան յանձնեցին Մ.-Աթոռը վերականգնելու հոգսը: Իսկական վերանորոգութիւնը տեղի ունեցաւ ԺԷ. դարում կըրկին վարդապետութիւնից կաթողիկոսական աթոռ բարձրացած հայրապետների ձեռքով և վարդապետ էր վերջապէս ԺԸ. դարու մեր ամենանշանաւոր հայրապետը՝ Սիմէօն Երեւանցին, երբ կաթողիկոս ընտրուեց 1763 թւին: Ուրեմն սրանից մի դար առաջ ոչ ոքի համար կասկածելի եղած չը պէտք է լինի, որ հայ վարդապետը կարող է կաթողիկոս ընտրվել: Այդպիսի կասկածն անտեղի կը լինէր, քանի դեռ ամենքի յիշողութեան մէջ կենդանի էին հայոց եկեղեցու աւանդական կարգերը, ամենքը գիտէին, թէ ինչպիսի մեծ դեր էին կատարել վարդապետները մեր եկեղեցու պատմութեան մէջ, ինչպէս վարդապետ կոչումը կրել պարծանք էին համարել ոչ միայն եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները, այլ նոյնիսկ կաթողիկոսները:

Արդ, երբ այսպիսի պայմաններում Ռուսաց Կայսրի հրամանով նոր կանօնադրութիւն է կազմվում հայոց եկեղեցու վարչութեան համար և յատուկ պատուէր է տրվում, որ կանօնադրութիւնն ըստ ամենայնի համաձայն լինի նոյն եկեղեցու աւանդական կարգերին, այդ պատուէրով էլ կանօնադրութիւն մշակողները որոշում են, որ հայոց կաթողիկոսը պէտք է ընտրվի բարձրաստիճան եկեղեցականներից՝ կարծէ էին և իրաւունք ունէին նրանք բարձրաստիճան համարել միայն եպիսկոպոսներին ու արքեպիսկոպոսներին, երբ իրանց գրեթէ ժամանակակից Սիմէօն Երեւանցին վարդապետութիւնից էր կաթողիկոս եղել, երբ իրանց ժամանակ և իրանցից առաջ ոչ միայն վարդապետներից պատրիարքներ էին ընտրվել Կ. Պօլսում և Երուսաղէմում, այլ և վարդապետական աստիճանով միացել պատրիարքական աթոռի վրա: Կարծէ էին նրանք մանաւանդ բարձրաստիճան չը համարել ծայրագոյն վարդապետներին, որոնք միայն իրաւունք ունեն վարդապետական գաւազանի իշխանութիւն տալ, մինչդեռ եպիսկոպոսն իսկապէս չունի այդ իրաւունքը, եթէ առաջուց ծայրագոյն վարդապետութեան աստիճան չէ ստացել: Կարծէ էին նրանք չիմանալ, որ հայոց վարդապետները ընդհանուր ազգային եկեղեցական ժողովներում քորեպիսկոպոսներից երբեմն նաև եպիսկոպոսներից բարձր աթոռ են ունեցել, նրանցից առաջ ստորագրել ժողովական թղթերին: Ըստ մեզ՝ անկարելի է այդ, և որ նրանք իմացել են թէ ինչպիսի դիրք ունի վարդապետը հայոց եկեղեցում և ըստ այնմ որոշում արել՝ պարզ ապացոյց է այն, որ ռուսահայոց եկեղեցական վարչութեան բարձրագոյն ատեանի՝ Էջմիածնի սինօդի ութ անդամներից չորսն անպատճառ վարդապետներ պէտք է լինեն նրա որոշմամբ: Խիստ տարօրինակ չէ՞ բարձրաստիճան չը համարել այն վարդապետներին, որոնց ձեռքը նրանք իրաւունք էին տալիս քննելու և դատելու ռուսահայ բոլոր առաջնորդներին՝ եպիսկոպոսներին ու արքեպիսկոպոսներին: Տարօրինակ չէ՞ր լինի, եթէ ռուսաց կառավարութիւնն այժմ իբրև բարձրաստիճան ճանաչել չը կամենար այն վարդապետներին, որոնք Կայսրի հրամանով սինօդի անդամ են հաստատված՝ շատ դէպքերում առաջնորդ են հաստատվել և նոյնիսկ բաւական ժամանակ վարդապետական աստիճանով առաջնորդական պաշտօնի մէջ եղել, թողնենք այն՝ որ Ռուսաստանից դուրս հայկական թեմերի մեծագոյն մասը այժմ վարդապետ առաջնորդներ ունենա:

Ի՞նչ է հետևում այս բոլորից. այն անշուշտ, որ ոչ մի հասկանալի և օրինական արգելք չը կայ՝ վարդապետներին բարձրաստիճան չը համարելու և հայրապետութեան թեկնածուների մէջ չը դնելու. իսկ ընդհակառակը ծանրակշիռ պատճառներ կան, որ վարդապետ թեկնածուներ ունենալը խիստ կարևոր և ցանկալի են դարձնում: Թէ ռուսահայ և թէ նոյնիսկ Թիւրքահայ վարդապետների մէջ կարելի է գտնել այնպիսի թեկնածուներ, որոնց՝ քառանուն ցանկի մէջ մտնելով շատ կը հեշտանայ այդ ցանկը կազմելը և Էջմիածնի գերագոյն ժողովը զերծ կը մնայ այն ցաւալի պատասխանատուութիւնից, որ առ ի չգոյէ լաւագոյնին կամ կուսակցական հաշիւների շնորհիւ մի ապիկար քառանուն ցանկի մէջ մտնէ և նոյնիսկ երկրորդ կամ առաջին ընտրելի դառնայ: Այսպիսի և նման տեսակէտներով կարևոր է, որ Էջմիածնի գերագոյն ժողովը վարդապետ թեկնածուներ առաջարկէ և եթէ արգելքի, առարկութիւնների հանդիպէ կառավարութեան ներկայացուցիչների կողմից՝ նախ հեռագրով դիմէ բարձրագոյն իշխանութեան և գրական կամ բացատրական պատասխան ստանալուց յետոյ միայն ձեռնարկէ ընտրութեան:

Վահան

ՆԱՄԱԿՆԵՐ ԷՋՄԻԱԾՆԻՑ

I

26 նոյեմբերի

Երեկոյեան ժամը 6-ին, ուշ, հասանք Էջմիածին. ճանապարհը սաստիկ ցեխ էր: Հազիւ կարողացանք լուացվել և գնացինք սեղանատուն, ուր հաւաքված էին պատգամաւորները: Իմացանք, որ Կ. Պօլսի պատրիարքական տեղապահ Դուրեանը հեռագրով բողոք է ուղարկել տեղապահ Սուրէնեանին գաղտնի քուէարկութեան դէմ, ասելով որ եթէ գաղտնի քուէարկութիւնը ազգի կամքին հակառակ արդիւնք տայ, պատասխանատուն նա՝ Սուրէնեանն է: Իմացանք, որ սինօդի պրոկուրորը առարկութիւններ է անում երկու ձայն ունենալու դէմ և գտնում է, որ վերջնական քուէարկութեան ժամանակ ամեն մի պատգամաւոր կարող է մի ձայն կամ քուէ տալ: Պարզվել է և այն հանգամանքը, որ քառանուն ցանկը կարելի է կազմել բացարձակ քուէարկութեամբ: Բայց ամենից հաճելին մեզ համար եղաւ այն, որ պրոկուրորը օրէնքի տեսակէտից ոչ մի արգելք չէ գըտնում, որ քառանուն, ուրեմն և երկանուն, ցանկի մէջ մտցվին վարդապետների անունները: Եթէ այս հնարաւոր դարձաւ, խօսվում է առաջ քշել Բագրատ վարդապետի և Կարապետ վարդապետի թեկնածութիւնը:

Ժամը 8-ին հրաւիրվեցինք սեղանի: Էջմիածնի կողմից բարիգալուստ մաղթեց Գառնակերեան արքեպիսկոպոսը: Ապա ճառեր խօսեցին Մինաս Ջերազ, Հ. Առաքելեան, դօքտոր Տաղաւարեան և Արշակ Ջօպանեան: Աշխարհական պատգամաւորների կողմից Էջմիածնի միաբանութեանը շնորհակալութիւն յայտնեց Հ. Առաքելեան:

Նոյեմ. 27, առաւօտ. ժ. 8-ին

Այսօր ժամը 10-ին առաւօտեան նշանակված է մասնաւոր խորհրդակցութիւն մի քանի հարցեր լուծելու համար: Մտադրութիւն կայ դիմել Փոխարքային և խնդրել, որ փոխէ վերջին տնօրէնութիւնը գաղտնի քուէարկութեան մասին: Այսօր կազմելու ենք և մի մասնաժողով, բաղկացած 7 կամ 9 հոգուց, որ պէտք է մշակէ քննվելիք հարցերը:

II

28 նոյեմբերի

Երէկ, նոյեմ. 27-ին, առաւօտեան ժամը 10-ին և երեկոյեան ժամը 8-ին կայացաւ պատգամաւորների առաջին մասնաւոր խորհրդակցութիւնը, պ. Մինաս Ջերազի ատենապետութեամբ, մասնակցութեամբ 60 պատգամաւորների, եկեղեցական և աշխարհական: Ս. Յարութիւնեանի առաջարկութեամբ, որոշվեց ընտրել 2 փոխ-ատենապետ և 3 քարտուղարներ: Ընտրվեցին փոխ-ատենապետներ պ. պ. Ս. Յարութիւնեան և Աւ. Ահարոնեան, իսկ քարտուղարներ՝ պ. պ. դօքտոր Ն. Տաղաւարեան, Մելքոն Կիրճեան և Գ. Զուբար, որոնք պէտք է կազմեն դիւան:

Որովհետև լուր էր տարածվել, թէ սինօդի պրոկուրորը գտնում է, որ օրէնքի համաձայն չէ կարելի թոյլ տալ մի պատգամաւորի 2 ձայն ունենալ, ուստի խորհրդակցութիւնը յանձնեց դիւանին պատրաստել մի զեկուցում այդ մասին և ներկայացնել: Ապա որոշվեց կազմել նաև մի յանձնաժողով, որ ժողովին առաջարկվելիք բոլոր հարցերը և զանազան պատգամաւորների կողմից առաջարկված զեկուցումները քննէ և ենթարկէ ժողովի քննութեան:

Երեկոյեան նիստում խորհրդակցութիւնը զբաղվեց այդ յանձնաժողովի ընտրութեամբ և, դժբաղդաբար, այն ամենը, ինչ որ տեղի ունեցաւ, պարզ ցոյց տուեց, թէ որքան անգէտ, անճանաչ են մեր Թիւրքահայերը, նոյնիսկ նրանց լաւագոյն գործիչները, մեր ռուսահայերիս գործերին, մեզ յուզող հարցերին և մեր դրութեանը:

Ժողովում ցանկութիւն յայտնվեց, որ յանձնաժողովի մէջ ընտրվին ներկայացուցիչներ միաբանութիւնից և տարբեր հոսանքներից ու ուղղութիւններից, որպէսզի հարցերը մշակվեն ոչ միակողմանի և բազմահմուտ կերպով: Եւ թէև դիւանը կազմել էր 15 թեկնածուների մի ցուցակ, որի մէջ, ճիշտ է, կային զանազան անուններ, զանազան ուղղութիւնների պատկանող, բայց դարձեալ բաւական միակողմանի էր և ոչ անաչառ. սակայն այդ անաչառ կազմած ցուցակն էլ չանցաւ և տապալվեց: Ընտրութիւնը կատարվեց թերթիկներով, ուրեմն գաղտնի, և հետևանքն այն եղաւ, որ ոչ միայն ոչ ոք մեծամասնութիւն չը ստացաւ (քուէարկողների թիւն էր 57, իսկ ամենաշատ քուէ ստացողն էր 27, ուրեմն կէսից էլ պակաս), այլ 5 առաւելագոյն քուէ ստացողներն էլ ամենքը Թիւրքահայեր էին, որոնց մէջ միայն պ. Արշակ Ջօպանեանը (25 ձայն ստացած) մեզ յայտնի անձնաւորութիւն է, իսկ մնացած 4-ը (Թորգոմ վարդապետ՝ 27 ձայն, Սահակ վարդապետ Օտապաշեան՝ 16 ձայն, Յակոբ Շաւարշ Էֆէնդի՝ 23 ձայն, Խաչատրեան՝ 18 ձայն) բոլորովին անծանօթ են մեզ իրանց հասարակական և ազգային գործունէութեան կողմից: Եւ այս անձինք պէտք է մշակէին ամենայն հայոց կաթողիկոսի պաշտօնավարութեան, հայոց եկեղեցու վարչական, տնտեսական, դպրոցական գործերի բարեփոխութեան ծրագիրներ: Բայց հէնց ամենից աւելի կարող ճանաչված այս 5 հոգին եւս մեծամասնութեան քուէն չէին ստացել, ուստի և, տարրական օրէնքի համաձայն, պէտք է համարվէին չընտրված, բայց այստեղ օգնութեան հասաւ Ս. Յարութիւնեանը, և սկսեց ապացուցանել, որ թէև մեծամասնութիւն չեն ստացել այդ 5 հոգին, բայց ժողովը կարող է բաց քուէարկութեամբ համարել նրանց ընտրված: Եւ ժողովը ընդունեց այս առաջարկութիւնը, որ յետոյ տեղիք տուեց մի բոլորովին զաւեշտական դրութեան և անախորժ, անհաճոյ վիճաբանութիւնների:

Հ. Ա.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Երևան, 27 նոյեմբերի

Քաղաքումս շշուկ է տարածվել, որ իբր թէ թեմական դպրոցի տեղիս գտնված հոգաբարձական կազմը գնացել է Էջմիածին և ամբողջ թեմի հասարակութեան կողմից խնդրել է տեղակալին, որ Երևանի առաջնորդ նշանակէ Մուրադբէգեան վարդապետին (Յուսիկ արքեպիսկոպոսը իբրև սինօդի անդամ այսօր գնալու է Էջմիածին և առանձնելու է իր նոր պաշտօնը): Մենք միանգամայն դէմ չենք Մուրադբէգեան վարդապետի անձնաւորութեանը. նա կարող է լաւ առաջնորդ լինել. բայց այստեղ սկզբունքի հարց է առաջ գալիս:—Ա) Երբ մի տեղ կաթողիկոսական կոնդակ կայ, որի մէջ ասված է, թէ պիտի ամբողջ թեմը մասնակցի ընտրութեանը և ընտրի իր թեմական առաջնորդը, ապա ինչ է ձեր արած քայլը: Բ) Եթէ վաղը ընտրված փոխանորդը չը լսի նշանակովի առաջնորդին և միշտ երեսծեծանք տայ ասելով՝ «Նախ հասարակութիւնից ընտրվիր և ապա ինձ հրամայիր. ես ընտրված եմ, իսկ դու՝ ոչ»,— ինչ կասէք սրան: Գ) Ասացէք խնդրեմ, ո՞ր հասարակութիւնը, ե՞րբ և ո՞ր ժողովում ձեզ ընտրեց այդ առիթով ներկայացուցիչ լինելու: Պարոններ, դուք միք մոռանայ, որ ընտրված էք միմիայն թեմական դպրոցը կառավարելու և ոչ թէ ամբողջ թեմի հասարակութեան կողմից թեմական առաջնորդ ընտրելու:

Ինչպէս լսեցինք, տեղապահը չէ յարգել սրանց խնդիրը և նշանակել է Թեմիս ժամանակաւոր կառավարիչ կոնսիստորիայի նախագահ Հմայեակ վարդապետ Տէր-Բաղդասարեանցին մինչև նոր կաթողիկոսի գալը:

Գ. Աղազադեան

—

Էջմիածին, 26 նոյեմբերի

Երևանի փոխ-թեմակալ՝ Յուսիկ արքեպիսկոպոսը կարգվելով սինօդի անդամ, նրա պաշտօնը ժամանակաւորապէս տեղապահ Սուրէնեանը յանձնել է Երևանի կոնսիստորիայի նախագահ՝ Հմայեակ վարդապետ Տէր-Սարգսեանին, որ և իրաւունք ունի մասնակցելու կաթողիկոսական ընտրութեան:

Որ Հմայեակ վարդապետը միանգամայն անհամապատասխան է այդ պաշտօնին և ժողովրդի հետ վարվելու ընդունակութիւնից զուրկ, թոյլ տուէք թւեմ երկու դէպք ասածներս ապացուցանելու համար:

1906 թ. սինօդը Հմայեակ վարդապետին կարգեց Օշականում «բահրա» ժողովրդ. չանցած մի շաբաթ, սկսվեց կռիւ նրա և ժողովրդի միջև, և եթէ սինօդը յետ չը կանչէր այդ վարդապետին, հաւանականօրէն մեծ անախորժութիւն առաջ կը գար:

Այս տարի էլ Հմայեակ վարդապետը, որպէս կոնսիստորիայի կողմից քննիչ, գնաց Փարաքար, որպէսզի հոգաբարձութեան և ուսուցչի միջև ծագած տարաձայնութեան վերջ դնէր, սակայն իրողութիւնը այն է, որ գործը աւելի ևս խճճեց և բարդացրեց, և վերջ ի վերջոյ գործը հասաւ սինօդ, ուր մինչև օրս էլ դեռ չէ վերջացած. Հմայեակ վարդապետի գոյնը ժողովուրդը շատ լաւ է բնորոշել սինօդին տուած խնդրում:

Աւելի լաւ էր Երևանի թեմը մնար առանց առաջնորդի, քան թէ Հմայեակ վարդապետին բաժին դառնար. իսկապէս ցաւել պէտք է, որ Սուքիաս և Կարապետ վարդապետից յետոյ՝ Հմայեակն է լինելու թեմակալ:

Տեղակալ Սուրէնեանը այդ կարգադրութեամբ եկաւ մի անգամ էլ ապացուցանելու, որ ինքը վարչական ընդունակութիւնից զուրկ մարդ է:

Ամսիս 29-ին ի տէր հանգուցեալ Մկրտիչ կաթողիկոսի մահվան տարեդարձի առիթով հոգեհանգիստ է կատարվելու Մայր տաճարում, իսկ 30-ին երդւելու են պատգամաւորները (աշխարհականները):

Ճանապարհորդ

—

Բագու, 26 նոյեմբերի

Երէկ, կիրակի, ամսիս 25-ին, երեկոյեան 9 ժամին Նիկօլաեվսկի ընդարձակ փողոցի վրա իրանց տանից դուրս են գալիս Նիկիտ և Սուրէն Ադամեան եղբայրները (երեք տարի առաջ չարագործներից նոյն փողոցի հանդէպ այգում սպանված Արտէմ Ադամեանի որդիքը) ժողովարան գնալու: Փողոցի դրան շեմքից հազիւ երեք քայլ արած, սլանում է իրանց դրան առաջ կանգնած կառքը դէպի Ադամեանները, բղաւելով «берегись»:

Այդ ազդանշանից յետոյ անմիջապէս շրջապատում են Ադամեաններին երեք հոգի, զգուշացնելով «ոչ մի ձայն», և հրում են Սուրէնին դէպի կառքը, որպէսզի գերի փախցնեն: Եղբայրները դիմադրում են. Նիկիտին ձեռք չեն տալիս, իսկ Սուրէնին վիրաւորում են վզից, կողքից և մէջքից: Վէրքերը վտանգաւոր չեն:

Իսկ այսօր, երկուշաբթի առաւօտեան, չարագործները հեռախօսով յայտնել են Ադամեանին, որ իրանք մարդասպաններ չեն, թող պահանջված դրամը պատրաստ պահեն, կը մտնեն իրանք գրասենեակը և կը ստանան:

Ադամեանների նոյն տանն է ապրում Բագուի քաղաքապետը: Սրանց տանից դուրս գալուց քանի րոպէ առաջ, նոյն փողոցն է դուրս գալիս քաղաքապետի ամուսինը և դրան առաջ կանգնած կառքն է կամենում նստել, սակայն կառապանը չէ թոյլատրում, ասելով որ կառքն ազատ չէ:

Կառապանը հայ է և ձիերը յայտնի, լաւ նժոյգներ: Բանտարկված է կառապանը, երկու ուրիշ մարդ ևս: Մի մարդ անձնասպան է եղել: Այսօր, երկուշաբթի, առաւօտից մինչև քաղաքից արագ գնացքի ուղևորվելը, երեկոյեան 6 ժամը, սաստիկ պաշարված է Տորգովայա փողոցը, կտրված անցուդարձը, խուզարկութիւն և հրացանաձգութիւն երկու կողմից՝ խուզարկողների և խուզարկվողների: Սպանված է մի գօրօդօվօյ, մէկն էլ վիրաւորված. կան սպանվածներ և խուզարկվողներից, որոնք փակված տնից պաշտպանվում են:

Տ.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Երևան, 27 նոյեմբերի

Ամսիս 25-ին նշանակված էր Մեսրոպ վարդապետի դատը Երուանդ վարդապետի դէմ, որը նրանից անցեալ տարի «Հովիւ» շաբաթաթերթի № 11-ի միջոցով մի քանի հասարակական խոշոր գումարների մասին հաշիւ էր պահանջել:

Մեսրոպ վարդապետին պաշտպանում էր Թիֆլիսից եկած երդ.-հաւ. օգնական Խատիսեանը, իսկ Երուանդ վարդապետին՝ երդ.-հաւ. Ա. Հասան-Ջալալեանցը: Բոլոր ներկայ եղող փաստաբանները, մասնաւոր մարդիկ և մինչև անգամ դատաւորները իրանց նախագահի հետ միասին խնդրել են հաշտվել: Երուանդ վարդապետը համաձայնել է գործը միջնորդ դատարանի յանձնել, իսկ Մեսրոպ վարդապետը ասել է հետևեալը. «Սա մեր վանքի կրթված վարդապետներից մէկն է. երբ նա գրել է այդ բաները, իմացել է թէ ինչ է գրում. ես էլ ստիպված եմ եղել դիմելու ոչ թէ հոգևոր, այլ մարմնաւոր դատարանին»:

Մի քանի վկաների բացակայութեան պատճառով գործը յետաձգվել է: Ինչպէս իմացանք, դուրս գալու միջոցին նախագահը և դատաւորները մասնաւոր կերպով դիմել են Ղևոնդ եպիսկոպոսին, որը նոյնպէս վկայ էր կանչված, և իրանց ցաւն են յայտնել և առաջարկել են ամեն ջանք գործ դնել այդ դատը մէջտեղից վերացնելու:

Գ. Աղազադեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշել է կիրակի, նոյեմբերի 2-ին, առաւօտեան, դիմաւորել Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվին: Դիմաւորման մասնակցելու են քաղաքագլուխը, քաղաքային վարչութեան ամբողջ կազմը, դումայի ձայնաւորները, բօրսայի կօմիտէտի նախագահը, մէշչանների աւագը և արհեստաւորների աւագը համքարների հետ ու դրօշակներով: Կոմսին կը մատուցվի աղ ու հաց, իսկ կոմսուհուն մի ծաղկեփունջ:

◆ Ինչպէս կարդում ենք «Кавказъ» պաշտօնական թերթում, Անդրկովկասի նախկին կառավարչապետ Նէյդգարդտի 1843 թ. հաստատած կանոնների № 23, 25, 26 և 27-րդ յօդուածների փոփոխութիւնը այն մտքով, որ ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութիւնը կատարվի գաղտնի քուէարկութեամբ, փոխարէն բացարձակի, ինչպէս մինչև այժմ էր, հետևանք է մինիստրների խորհրդի այս հոկտեմ. 9-ին բարձրագոյն հաստատված որոշման, որի համաձայն Կովկասի Փոխարքային իրաւունք է վերապահվում՝ սեփական իշխանութեամբ, փոփոխել վերոյիշեալ կանոնները վերևում բացատրըված մտքով, այսինքն գաղտնի քուէարկութեամբ:

◆ Բօլղարիայի կողմից կաթողիկոսական պատգամաւոր է ընտրված պ. Ալ. Մելիք-Ազարեան, որը սակայն, յարգելի պատճառներով, անկարող եղաւ Էջմիածին գնալ, իսկ իր ձայնը հեռագրով տեղեկացրեց Էջմիածին:

◆ Հայոց դրամատիկական ընկերութիւնը որոշել է Թիւրքիայից եկած կաթողիկոսական պատգամաւորների Թիֆլիս գտնված օրը մի ներկայացում կազմել արտիստական թատրոնում:

◆ Երէկ, նոյեմբերի 29-ին, հանգուցեալ Մկրտիչ Ա. կաթողիկոսի մահվան տարեդարձի օրը, Ներսիսեան դպրոցում ու նրա բաժանմունք՝ Հաւլաբարի մասում, երկրորդ դասից յետոյ կատարվեց հոգեհանգիստ, որից յետոյ աշակերտները արձակվեցին իրանց տները:

◆ Այսօր, երեկոյեան արտիստական ընկ. դահլիճում տեղի կունենայ Ջութակահար Դ. Դաւթեանի համերգը:

◆ Այսօր երեկոյեան ժամը 7-ին, կովկասագիտական բարձր դասընթացքներում Միւնխէնի համալսարանի դօկտոր Ադոլֆ Դիրր կը կարդայ իր հերթական դասախօսութիւնը կովկասեան լեզուների համեմատական նկարագրութեան մասին:

◆ Նոյեմբերի 31-ին, երեկոյեան ժամը 8-ին տեղի կունենայ կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան նիստը: Զբաղմունքի առարկաներն են. իսկական անդամների ընտրութիւն, զեկուցում ընկերութեան գործունէութեան մասին ամառվայ ամիսներում, զեկուցում այգեպանական դպրոցի դրութեան մասին և ընթացիկ հարցեր:

◆ Երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի ամենահպատակ զեկուցման համաձայն, բարձրագոյն թոյլատրված է Ալէքսանդրօպօլի քաղաքային դումայի տրամադրութեան տակ դնել հեղեղից փչացած ազգաբնակութեանը ձրիաբար բաժանելու համար (կործանված կացարանները վերաշինելու նպատակով) 1150 հատ գերաններ արքունական անտառներից:

◆ Ուսուցիչներին և վարժուհիներին փոխադարձաբար օգնող ընկերութիւնը խնդրամատոյց է եղել Թիֆլիսի քաղաքային վարչութեան խնդրելով նիւթական օգնութիւն հասցնել ընկերութեան, որի բացած դասընթացքում ուսանում են մօտ 80 մարդ:

◆ Մի խումբ ինտելիգենտներ մի նախագիծ են մշակում Թիֆլիսում մասնաւոր դպրոց հաստատելու մասին: Այդ դպրոցում աւանդվելու են վրացերէն, ռուսերէն և թուրքերէն լեզուներ հասակաւորների համար:

◆ Թիֆլիսի մէշչանների աւագի պաշտօնի համար, հրաժարված Ապրեամօվի փոխարէն, իբրև թեկնածու համարում են Վ. Պօղոսեանին, իսկ իբրև սրա օգնական՝ Ի. Ատօեվին:

◆ Ինչպէս լսել է «Зак. Обоз.» լրագիրը, Թիֆլիսում կազմակերպվում է վրաց գիմնազիայի չքաւոր աշակերտներին օգնող նոր ընկերութիւն:

◆ Երէկ վրաց ազնուականութիւնը 30,000 րուբլի մտցրեց պետական բանկի տեղիս բաժանմունքը, իբրև գրաւական Կախէթի երկաթուղագծի համար:

◆ Թիֆլիսի նահանգապետը առաջարկել է գաւառապետին բացատրել գիւղացիներին կովկասեան ֆիլօքսերային կօմիտէտի հրատարակած կանօնները ֆիլօքսերայի առաջն առնելու համար:

◆ Մինչև օրս Թիֆլիսի քաղաքային վարչութեան զինուորակոչութեան ատեանը զինուորական ծառայութեան է ընդունել ընդամենը 159 երիտասարդների. պակասում են դեռ 25 հոգի:

◆ Սօլօլակի թունելը շուտով կը վերջանայ. մնում է փորելու ընդամենը 5 սաժէն:

◆ Երևանի Զանգի գետի ջուրը առաջին օրը բակտէրիօլօգիական քննութեան ենթարկեցին Թիֆլիսի քիմիական լաբորատորիայում: Քննութիւնը ցոյց տուեց, որ նրա մէջ խօլերային վիբրիօններ չը կան:

◆ Ս. Թառայեանի օգտին ստացանք՝ 1) Օդեսսայից՝ Գ. Պապեանից—1 րուբ., 2) Մեծեղից՝ Բալասան Խաչատրեանից, հանգանակված մի խումբ մարդկանց մէջ,—11 րուբ. 5 կոպ.:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Բաբգէն վարդապետ. «Ս. Էջմիածնի կալուածներն ու նրանց բարեկարգութեան ծրագիրը», Վաղարշապատ, 1908 թ., գինն է 20 կոպէկ:

Անցեալ 1907 թւի նոյեմբերին Թիֆլիսում տեղի ունեցան մի յատուկ յանձնաժողովի նիստեր նուիրված Էջմիածնի կալուածների բարեկարգութեան խնդրին:

Այդ նիստերին մասնակցում էին տնտեսագէտներ, իրաւաբաններ, վանական կալուածների կառավարիչներ և թեմական հոգաբարձութիւնների ներկայացուցիչներ:

Յանձնաժողովը ծանօթացաւ խնդրին վերաբերեալ նիւթերի և տեղեկագրերի հետ և մշակեց բարեկարգութեան ծրագիր թէ տնտեսագիտական և թէ իրաւական-վարչական մասերին վերաբերեալ:

Եւ պէտք էր սպասել, որ Էջմիածինը կը շտապէր թէ լոյս ընծայել յանձնաժողովի կատարած աշխատութիւնը և թէ ձեռնարկել գործնական միջոցների կատար ածելու յանձնաժողովի որոշումները:

Տեղապահը և սինօդը այդ չարին ժամանակին:

Զեկուցումների մի մասը լոյս տեսաւ պարբերական մամուլում և յատկապէս «Մշակի» մէջ (տես 1908 թւականի №№ 8, 12, 13, 14, 16 և 17): Այդ լոյս տեսած մասը նորից նկատ առնվեց այն յանձնաժողովում, որ կազմվել էր այս տարի Թիֆլիսում կաթողիկոսական ընտրութեան խնդիրների առիթով:

Չը սպասելով սինօդի հրատարակութեան, որ յայտնի չէ թէ երբ կը լինի, Բաբգէն վարդապետը լոյս է ընծայել յանձնաժողովի գործունէութեան տեղեկագիրը, որպէսզի ծանօթացրած լինի Էջմիածին ժողովված կաթողիկոսական պատգամաւորներին կալուածական խնդրի հետ: Եւ անշուշտ լաւ գործ է կատարել:

Եւ միայն կարելի է ցանկալ, որ լոյս ընծայվէին նաև միւս նիւթերը, որոնք վերաբերում են կալուածական խնդրի ուսումնասիրութեան: Սինօդը պէտք է յանձն առնի այդ աշխատանքը և հրատարակութեան ծախքերը, որոնք չեն կարող բարդվել մասնաւոր անձերի վրա:

Ա. Բ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծեղ, 18 նոյեմբերի

«Մշակ» լրագրի տեղեկութիւններից, սրտի անհուն ցաւակցութեամբ, իմացայ՝ թէ ինչպիսի թշուառ դրութեան մէջ է գտնվում մեր իրականութեան մէջ գործող հայ գրող Սեդրակ Թառայեանը:

Անցուցա կատարելով մի կարևոր պարտականութիւն, շտապեցի մի փոքրիկ հանգանակութիւն բաց անել մեր շրջանի առատաձեռն մի խումբ հայ ընկերների մէջ, որոնք և չը խնայեցին տալ իրանց լումաները։ Կը խնդրեմ, ի միամտութիւն նուիրատուների, տպագրէք ձեր լրագրի առաջիկայ համարներում նրանց անուն-ազգանունները։

Նուիրատուներն են. Բաղդասար Գէորգեան, Բարսեղ Գիւլբենկեան, Ներսէս Օրբելեան՝ 10-ական ղռան, Հայկ Ղալաչեան, Արշակ Տէր-Յովհաննիսեան, Ջօհրաբ Մելիք Մաչկամբարեան, Աշոտիկ, Վաղարշ, Հրանտ, մի ոմն՝ 5-ական ղռան։ Ընդամենը 65 ղռան, որը վերածելով ռուսական դրամի՝ ամբողջը եղել է 12 ր. 05 կ., որից մէկ բուբլին դուրս գալով փոխանակագրի ծախքը՝ Մնացորդ 11 ր. 05 կոպէկը խնդրում եմ հասցնել ըստ պատկանելոյն։

Բալասան Խաչատրեան

—

Թիֆլիս, 28 նոյեմբերի

Ահա մօտ մէկ տարի է անցել այն օրից, երբ Թիֆլիսի լրագրավաճառների արհեստակցական միութիւնը լիկվիդացիայի է ենթարկվել և պ. Թ. Խաչմանեան չէ բարեհաճել այդ ժամանակամիջոցում մաքրել վերոյիշեալ միութեան անդամների հետ իր ունեցած դրամական հաշիւները։ Նա ազնիւ խօսք տուեց, որ միամիտ լինենք, անհոգ՝ միանգամայն մեր անդամավճարների վերաբերմամբ, և պարտաւորվեց վերադարձնել մեզ՝ լրագրավաճառներիս հասանելիք դրամները լիովին, միութեան ինչ-ինչ պատճառներից քայքայման պարագայում։ Սոյն դիմումով, մի աւելորդ անգամ եւ դիմում ենք պ. Թ. Խաչմանեանին, մենք՝ նախկին լրագրավաճառների արհեստակցական միութեան անդամներս, խնդրելով մօտալուտ ապագայում տալ գործին վերջնական վախճան։ Վերջերս մենք իմացանք, որ նա Թիֆլիսում չէ գտնվում. այնուամենայնիւ. պարտաւոր են վերջ տալ գործին։

Ի դիմաց լրագրավաճառների՝

Խ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

(Սեփ. Թղթ.)

—

Թաւրիզ, 23 նոյեմբերի

Սուջալ-Նիզամի մահը ամենքին ենթադրել էր տալիս, որ Մարանդան կանցնի սահմանադրականների ձեռքը, բայց վերջին լուրերը ցոյց են տալիս, որ գործի գլուխ է անցել յիշեալի 17—18 ամեայ որդին։

Թէպէտ մի քանի օր է, որ առատ ներմուծութիւն կայ շաքարի և նաւթի, որոնց արժէքները բաւական իջան, բայց այսուհանդերձ խօսվում է, որ Էյն-ուդ-Դօվլէն Թէհրանի կարգադրութեան համաձայն հրահանգել է Մարանդա, որ արգելեն թէ ներածութիւնը և թէ արտածութիւնը. առուգութիւնը ժամանակի կարօտութիւն ունի։

Էյն-ուդ-Դօվլէն վերահաստատված է իր պաշտօնում և գտնվում է Վասմինջ գիւղում (15 վերստի վրա)։ Առաջնորդարանի դիմումի համաձայն հրամանագրեց Մուժամբար հայաբնակ գիւղի շրջակայքը աւերող Սամադ-խանին, որ Մուժամբար գիւղին չը մօտենայ և առիթներ չը տայ անախորժութիւնների. այսու հանդերձ, ովքեր որ ըստ էութեան հասկացողութիւն ունեն պարսկական կառավարչական հրամանագրերի մասին, գիւղի ապահովութեան մասին խիստ մտատանջութեան մէջ են։

Պարսկահայերի չէզոքութիւնը պարսկական շարժումներին փաստ է, գլխաւորապէս, ինչպէս որ ուրիշ անգամ էլ շեշտած ենք, իրանց ունեցած աննշան թւի պատճառով։ Ցանկալի էր, որ այդ չէզոքութիւնը միշտ յարգված մնար. բայց Մակուից եկած Իզզօ խանի բանակը բռնի բերված էին, եթէ չենք սխալվում, չորս հոգի հայեր, որոնցից երկուսը Աջու կռւում սպանվեցին. Երևակայեցէք ինչ անախորժ էր սահմանադրականների համար բռնապետական կամ կառավարական բանակում հայեր տեսնել։ Այս մասին ուշադրութիւնն ենք հրաւիրում Թէհրանում գտնվող Սահակ արքեպիսկոպոս Այվազեանի (Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդ), որ հարկ պահանջած դիմումներն անէ, ուր որ հարկն է, որպէսզի Մակուի բանակը խանը հայերի չէզոքութիւնը չը խախտէ, ի վնաս բազմաչարչար ժողովրդի, որի հասցէին առանց այն էլ զրպարտութիւններ, ամբաստանութիւններ յերւրողների բանակը սահմանի այն կողմում խիստ մեծաթիւ է։ Այդ սպանվող երկու հայերին Ջուլֆայից եկող մի ճանապարհորդ Մարանդայում տեսել էր. վերջիններս խնդրել էին այդ թշուառները, որ առաջնորդարանի կամ այլ միջոցներով դիմումներ լինեն Իզզօ խանին. որ իրանց արձակեն. դիմումները ինչ զօրութիւն ունեն մարդկանց համար, որոնց կրծքի տակ քար է դրված սրտի փոխարէն...

Այսօր հայերի մէջ խոլերայի մահվան երկրորդ դէպքը տեղի ունեցաւ. այս էր պակաս...

Իրօ

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

—

◆ Պատր. տեղապահը մի յանձնաժողով է կազմել օսմանեան պարլամենտի հայ անդամների ընտրութեան եղանակի մասին խորհրդակցելու։ Այդ յանձնաժողովի անդամներն են ի միջի այլոց մեզ ծանօթ Ակնունի, Մուրատ, Սապահ-Գիւլեան, դօքտոր Տաղաւարեան, Բիւզանդ Քէչեան և այլք։

◆ Հայ Թերթերը Քեամիլ փաշայի դիւանի ուշադրութիւնն են հրաւիրում այն հանգամանքի վրա, որ մինչ բազմաթիւ յոյներ կայմակամի պաշտօն ունեն հայաբնակ գաւառներում, հայերից դեռ մի հատ կայմակամ չը կայ նշանակված։

◆ Կովկասահայերին լաւ ծանօթ պ. Տիգրան Զաւէն, որ վերջերս մեկնեց Կ. Պոլիս, սկսել է մի շարք յօդուածներ գրել «Սուրհանդակ» թերթի մէջ թէ ընդհանուր քաղաքական բովանդակութեամբ և թէ հայկական հարցին վերաբերեալ։ Իցիւ թէ պ. Տիգրան Զաւէնը ստիպէր թիւրքահայ մամուլը մի քիչ անկախ և լրջամիտ ուղղութիւն ունենալ։

◆ Ստացված վերջին տեղեկութիւններից երևում է, որ սովը Զէյթունում խիստ ծանր դրութիւն է ստեղծել հայ ազգաբնակութեան համար։ Ոչ մի տեղից օգնութիւն չէ հասնում։ Անհրաժեշտ է անմիջական օգնութիւն հասցնել սովեալներին, այլապէս աղէտն անդարմանելի կը լինի։ Սիս կաթողիկոսը Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին գրած իր վերջին նամակներից մէկում յայտնում է, թէ նպաստի բացարձակ բացակայութիւնն իրան ձգել է վարանման ու անել դրութեան մէջ։

◆ Պարիզում կազմվել է մի ընկերութիւն, որը բաղկացած է անգլիացիներից ու ամերիկացիներից։ Այդ ընկերութեան նպատակն է հոգալ Բրազիլիայում գտնվող հայ գաղթականների վիճակի մասին։ Յիշեալ ընկերութեան Կ. Պոլսի ներկայացուցիչը վերջերս դիմել է ազգ. պատրիարքարանին և յանուն ընկերութեան խնդրել, որ պատրիարքարանը պաշտօնապէս զեկուցանի, թէ Բրազիլիա գնալ ցանկացող հայ գաղթականներին յիշեալ ընկերութիւնը ձրիաբար փոխադրում է և ապա նոյն տեղում տալիս է մշակելու հող, հայթայթում է բնակարան կամ որևէ գործ։ Պատրիարքարանը յիշեալ ներկայացուցչի ուշադրութիւնն է հրաւիրել այն հանգամանքի վրա, որ ներկայ ռէժիմի պատճառով հայ գաղթականները վերադառնում են հայրենիք՝ իրանց հայրենի օջախը շէնացնելու, և ապա շնորհակալութիւն յայտնել ընկերութեան մարդասիրական այդ ձեռնարկի առիթով, աւելացնելով միաժամանակ, որ, այնուամենայնիւ, ինքը պատրիարքարանը այդ մասին հարկաւոր զեկուցումը կանի։

◆ Գրիգոր Մանդալեան անուն մի պարոն վերջերս Կ. Պոլսի հայոց պատրիարքատեղապահին է յանձնել 3804 ղրուշ, որպիսի գումարը հաւաքված է Օվաջըկի, Ժամավայր գիւղի և Զաթալ-Դէրէի հայ համայնքներից յօգուտ հայ գաղթականների։

◆ Դիարբէքիրից հաղորդվում է, որ Մարդինի ու Մադէնի շրջանների ազգաբնակութիւնը քիւրդական Միրան ցեղի պետ Աբդիւլքէրիմ-բէյի, ինչպէս և Միդիաթի ու Բալուի շրջաններում բոյն դրած աւազակախմբերի յարձակումներին է ենթարկվում։ Այդ յարձակումները, մանաւանդ վերջին ժամանակներս, խիստ յաճախ են կրկնվում։ Վերոյիշեալ վայրերի կառավարիչները պատշաճաւոր իշխանութիւններից զօրքեր են պահանջում իրանց իրաւասութեան ներքև գտնվող շրջանները պաշտպանելու համար։

◆ Թիւրքական մինիստրների խորհուրդը, յարգելով հայ գաղթականների խնդիրքը, որոշել է Կ. Պոլսի Մայր եկեղեցում գտնվող հայ կարօտ գաղթականներին փոխադրել Կ. Պոլսի բժշկական նախկին ուսումնարանի շինութեան մէջ։

◆ Կ. Պոլսի Խասգիւղ կոչված թաղում հայ երիտասարդները կազմել են «մարմնամարզական ակումբ», որի հիմնադիրները մօտերս պիտի հիմնեն և «լսարան-ընթերցարան»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ
Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
Ներքին հիւանդութիւններ
Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. / 5—6 ժ. երեկ.
Վելիամինովսկայա փող., № 10.
(ա. օ.) 100—2

ԲԺԻՇԿ **Ն. Ա. ԵԱՐԱՄԻՇԵԱՆ**
Ներքին եւ երեխայոց
Հիւանդութիւնների
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է { առաւօտեան 12—2 ժ. / երեկոյեան 5—7 ժ.
Օլգինսկայա փողոց, № 14.
(շ. ե. հ.) 20—3

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Սիֆիլիս, վեներական, միզասեռական և մորթու ցաւեր
Ընդունելութիւն ամեն օր } 12—2 ժ. ցեր. / 5—7 ժ. երեկ.
Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33.
(հ. շ.) 100—18

ՀՐԱՒԷՐ

Ջգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցու 21 տարեկանից բարձր արական սեռի ծխականները հրաւիրվում են կիրակի, նոյեմբերի 2-ին, առաւօտեան ժամը $11^1/_2$-ին, եկեղեցի, խորհրդակցելու մի քանի կարևոր խնդիրների մասին, քննելու նախկին հոգաբարձութեան հաշիւները, ընտրելու հոգաբարձութեան անձնափոխանորդներ, լսելու և քննելու եկեղեցու երկու տարվայ հաշիւները (1906—1907 թ.թ.)։

Հոգաբարձութիւն

(հ. շ. կ.) 3—1

ԷՊԻԼԻԱՏՕՐ

ՆԻԼ

առնում է վայրկենապէս, վերջնականապէս և առանց ցաւի **ՄԱԶԵՐԸ** և **ԱՂՈՒԱՄԱԶԸ**, որոնք այլանդակում են դէմքը և մարմինը։

Առաջ չէ բերում էպիդերմիսի բորբոքումն։ Մորթը դառնում է կակուղ և թաւշային. գործ են ածում արտիստները և բարձր արիստօկրատիան։ Միակն է, հաւանութիւն գտած հռչակաւոր բժիշկներից։

ՈՍԿԷ ՄԵԴԱԼ

Սրուակի գինը 4 ր.։ Առաքումը ձրի։ Verdeille Pharmacien de 1-re classe, c 87, Rue de Levis, Paris. Պահեստը՝ Кавказское О-во Торговли Аптекарскими Товарами въ Тифлисѣ. (15, 30) 13—8

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ"
Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԷԴԵՎԻ
«Этикетъ утвержденъ прав.» մակագրութեամբ.

Գլխաւոր պահեստատեղը Դեղագործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։

(10, 20, 30) 50—25

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ 29 ՏԱՐԵԿԱՆ, լիւթերական դաւանութեան, որ աւարտել է միջնակարգ դպրոց և գիտէ հաշւապահութիւն, ռուսերէն և գերմաներէն լեզուներ, 5-ամեայ առևտրական պրակտիկայով, ընտանեկան հանգամանքներից ստիպված կամենում է պաշտօնով փոխադրվել Կովկաս կամ Հարաւային Ռուսաստան։

Հասցէ՝ г. Лодзь, Петроковская 115.
Э. Г. Лянге. (օ. մ.) 4—3

УГОЛЬ
КУЗНЕЧНЫЙ, ПАРОВИЧНЫЙ
ПЛАМЕН., АНТРАЦИТЪ, КОКСЪ.
ЦѢНЫ ОПТОВЫЯ.
А. БРАУХЛИ, Харьковъ.

(ա. օ.) 52—40

Լոյս տեսաւ
ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԸ ու ՆՐԱՆՑ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրավաճառանոցին, կամ՝ Св. Эчміадзинъ, архимандриту Бабкену.

(ե. հ. շ.) ապ. 6—2

ԺԱՄԱՑՈՅՑ KAVALIER

Ընդառաջելով գնողների ցանկութեան ունենալ ճիշտ և լիակական ժամացոյց էժան գնով, մենք վճռեցինք տալ 3 ր. 95 կ.-ով տղամարդկանց բաց տափակ ժամացոյց «KAVALIER», վերջին կատարելագործութիւններով ժամացոյցային մեխանիզմի մէջ։ Կորպուսը փայլուն մուգ կապոյտ գոյնի է։ Ցիֆերբլատը մետաղական ոսկեզօծված կամ արծաթազօծված։ Սլաքների ուղղութիւնը՝ գլխի վրա։ Ընթացքը՝ խնամքով ստուգված, որի մասին տրվում է երաշխաւորութիւն։

Պատուէրներ կատարվում են անմիջապէս պահանջը ստանալուց յետոյ։

Առաքման համար վերցվում է գնողներից { Եւրոպական Ռուսաստան 50 կոպ. / իսկ Ասիական » 75 կոպ.

Պատուէրները ուղարկել՝ Торговому дому

Московскій Центральный Складъ Часовъ.

Москва, д. Виноградова № 126.

Յ. Գ.—Կանխավճար ուղարկողներին, դրամով կամ մարկաներով, ձրի տրվում է ժամացոյցի շղթայ տղամարդի՝ կամ կնոջ։

(հ. կ.) 30—29

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԲԱՌԱՐԱՆ ՕՏԱՐԱԶԳԻ ԲԱՌԵՐԻ
և
ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄՏԱԾ ՄՏՔԵՐԻ ՈՒ ԴԱՐՁՈՒԱԾՔՆԵՐԻ
Անհրաժեշտ ձեռնարկ լրագիրներ ու գրքեր կարդալիս:
308 երես, գինը 1 ր., գումարով 20% զեղչ։

Հասարակական կեանքի արագ առաջադիմութեամբ վերջին տարիներս շօշափվում են բազմաթիւ նոր հարցեր, անխուսափելի դարձնելով լրագիրների և գրքերի մէջ օտարազգի և գլխաւորապէս՝ եւրոպական բառերի գործածութիւնը, որոնք, սակայն, հայ ընթերցողների լայն խաւերին անհասկանալի են մնում։ Ներկայ «Հանրամատչելի բառարանը», բացատրելով թէ օտարազգի բառերի ու դարձուածքների նշանակութիւնը և թէ հանրագիտական համառօտ տեղեկութիւններ տալով՝ նպատակ ունի ընդառաջ գնալ այդ պահանջին՝ ծառայելով իբրև անհրաժեշտ ձեռնարկ լրագիրներ ու գրքեր կարդալիս։

Պահեստը Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում։

(կ. հ.) 2—2

ՀԱՑԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ԵՂԲԱՐՔ Բ. ԵՒ Գ. ՏԷՐ-ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՑՆԵՐԻ

Յայտնվում է Անդրկովկասի բոլոր հացավաճառներին, որ Անդրկասպեան երկրի Ասխաբադ քաղաքում վաղուց բացած ունենք ալիւրի և հացահատիկի պահեստ։ Ընդունում ենք պատուէրներ՝ ճանապարհելու ըստ պահանջման։ Պատուէրները կատարվում են իսկոյն՝ կանխավճար ստանալով իւրաքանչիւր վագոնին երկու հարիւր րուբլի։ Նմուշները ուղարկում ենք ցանկացողներին։ Տեղական օրվայ արժէքը. գիզին լաւ ցորենը՝ պուդը մինչև 1 ր. 10 կ., հասարակը՝ մինչև 1 ր. 5 կ.։ Նոյն ցորենի ալիւրը—«բազմօլը» 10 կ. թանգ.

Եղբ. Բ. եւ Գ. Տէր-Բաղդասարեանցներ

Հասցէ { Նամակների համար. Асхабадъ, Бр. Б. и Г. Теръ-Багдасарянцъ / Հեռագիրների համար. Асхабадъ, Тербагдасарянцъ

(հ.) ապ. 5—3

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
— ՌԻԳԱՅՈՒՄ —
1888

Անդրկովկասեան ֆաբրիկային պահեստ Թիֆլիսում
Սօլօլակսկայա փող., № 4.

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ՝
ԼԻՆՕԼԷՈՒՄ մեծ քանակով, միագոյն և նկարներով.
ԱՍԲԷՍՏԻ ԿԱՐՏՕՆ.
ԱՍԲԷՍՏԻ և ՏԱԼԿԻ ՆԱԽՇԵՐ.

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՑԱՒԻՏԵՆԱԿԱՆ» ԼԻՆՕԼԷՈՒՄ միջանցուկ նկարներով, որոնք չեն ձևափոխվում մինչև լինոլէումի վերջնական մաշվելը։

ԼԻՆԿՐՈՒՍՏԱ (յաւիտենական պաստառներ) ռելիեֆ նկարներով՝ զարմանալի իրանց գեղեցկութեամբ և մեծ խնայողութեամբ։

ՀԱՏԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ աշխարհի ամենալաւ
կրկնակօշիկների **ՊՐՕՎՕԴՆԻԿ**

(№ 1) 25—2

Электропечатня Н. Г. Аганьянцъ

Полицейская. 7.